ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01-28

ք. Աշտարակ «04» Օգոստոս 2017թ.

«ՀՀ Արագածոտնի մարզպետարանը», ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ.Գևորգյան -ի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Մխիթարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Կաքավաձորի մշակույթի տան վերանորոգում»** շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **01 նոյեմբերի 2017թ:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և

անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **10848000 (տաս միլիոն ութ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, որից 1808000 (մեկ միլիոն ութ հարյուր ութ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Արագածոտնի մարզպետարան	«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ, Վ. Պետրոսյան 4	ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Սևան
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Գրիբոյեդովի 12 բն 25
Հ/Հ900441001295	Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 05004247	Հ/Հ 205002227051
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի Աշխատակազմի ղեկավար	ՀՎՀՀ 08616945
Հ.Գևորգյան	Տնօրեն
	Վ.Մխիթարյան

Հավելված թիվ 1
« 04 » Օգոստոս 2017 թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01-28 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Կաքավաձորի մշակույթի տան վերանորոգում» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ դրամ

№№ ը/կ	Աշխատանքների և ծախսերի անվանում	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	1.Շինարարական աշխատանքներ				
	1.1 Քանդման աշխատանքներ				
1	Նախամուտքում գոյություն ունեցող պեմզաբլոկներից b= 20սմ հաստությամբ միջնապատերի քանդում	$մ^3$	1.62	9800	15876
2	Նախամուտքում գոյություն ունեցող փայտյա տախտակներից հատակների քանդում	$մ^2$	149.63	660	98756
3	Գոյություն ունեցող փայտյա դռների ապամոնտաժում	$մ^2$	17.76	1500	26640
4	Սանհանգույցում հախճասալիկների քանդում	$մ^2$	14.4	790	11376
5	Սանհանգույցում հատակների վրայից կերամիկական սալիկների քանդում	$մ^2$	7.92	530	4198
6	Պատերի վրայից ջրաէմուլսիոն ներկերի մաքրում	$մ^2$	851.00	264	224664
7	Առաստաղի վրայից գոյություն ունեցող ջրաէմուլսիոն ներկերի մաքրում	$մ^2$	258.31	264	68194
8	Շինարարական աղբի հավաքում , բարձում ձեռքով ի/թ վրա	տն	21.0	2508	52668
9	Շինարարական աղբի տեղափոխում ի/թ մինչև 2կմ	տն	21.0	1056	22176
10	Աշխատանքներ լցակույտում շինարարական աղբի տեղափոխման ժամանակ	$մ^3$	11.64	42	489
				Ընդամենը՝1.1	525036
	1.2.Վերանորոգման աշխատանքներ				
11	Պահուստում 10^{ե}-IV կ. գրունտի մշակումը 1.0$մ^3$ տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	0$մ^3$	57.16	640	36582
12	Գրունտի տեղափոխում լիցք 1կմ միջին հեռավորությամբ	տն	114.32	924	105632
13	Լիցքի գրունտների օդաճնշական տուփանում	$մ^3$	57.16	264	15090
14	Գրունտների ջրում	$մ^3$	57.16	315	18005
15	Բետոնից նախապատրաստական շերտի իրականացում հատակների տակ 8սմ հաստությամբ B12.5 դասի բետոնից	$մ^3$	3.27	46600	152382
16	Հորիզոնական ջրամեկուսացում 1 շերտ իզոգամից բիտումային մածիկի վրա	$մ^2$	48.93	4885	239023

17	Հատակների տակ հարթեցնող շերտի տեղադրում ցեմենտա ավազային շաղախից, h=30մմ	մ²	48.93	1582	77407
18	Հատակների տակ հարթեցնող շերտի տեղադրում ցեմենտա ավազային շաղախից, h=40մմ	մ²	108.8	2100	228480
19	Հատակների կառուցում կերամոգրանիտե սալիկներից 10մմ և ավել հաստությամբ	մ²	149.93	11000	1649230
20	Փայտե տախտակներից հատակների մասնակի վերանորոգում 20% չափով	մ²	22.32	9100	203112
21	Փայտե տախտակներից հատակների հարթեցում	մ²	111.6	660	73656
22	Փայտե տախտակներից հատակների օլիֆապատում և ներկում 2շերտ	մ²	111.6	1452	162043
23	Որմնախորշի փակում կանոնավոր կտրվածքի տուֆ քարի շարվածքով 20սմ հաստությամբ	մ³	0.36	26664	9599
24	Հատակների կառուցում կերամիկական սալիկներից 8մմ և ավել հաստությամբ	մ²	8.1	12012	97297
25	Շրիշակների կառուցում կերամոգրանիտե սալիկներից 100մմ բարձրությամբ	մ²	9.7	20000	194000
26	Պլաստմասսից պատուհանագոգերի տեղադրում b=30սմ լայնությամբ	մ²	15.28	1056	16136
27	Պլաստմասսից պատուհանագոգեր b=30սմ լայնությամբ	գծմ	23.4	3432	80309
28	Արտաքին մետաղական դռան տեղադրում	մ²	3.6	55700	200520
29	Մետաղապլաստից կաղնու գույնի ներքին նոր խուլ դռների տեղադրում	մ²	14.16	55308	783161
30	Սանհանգույցներում պատերի բարելաված սվաղ ցեմենտավազե շաղախով	մ²	20.16	2245	45259
31	Պատերի երեսպատում կերամիկական հախճասալիկներով h=2.1մ	մ²	20.2	12540	253308
32	Պատերի մեջ նոր տեղադրվող դռների կողնակների և պատերի սվաղ գաջե շաղախով	մ²	31	1980	61380
33	Պատերի և դռների կողնակների ներկում լատեքսային ներկերով, ծեփամածկուումով	մ²	882	1102	971964
34	Առաստաղի ներկում լատեքսային ներկերով,ներկերով, ծեփամածկուումով	մ²	266	1130	300580
35	Շինարարական աղբի հավաքում , բարձում ձեռքով ի/թ վրա	տն	21	2508	52668
36	Շինարարական աղբի տեղափոխում ի/թ մինչև 2կմ	տն	21	1100	23100
				Ընդամենը՝1.2	6049924
				Ընդամենը՝1	6574961
	2.Ներքին ջրամատակարարման ցանց				
1	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում Φ63x5,8մմ, փորձարկումով	մ	10	4260	42600
2	Պոլիպրոպիլենե խողովակ Φ20x1,9մմ,փորձարկումով	մ	21	3230	67830

3	Երկաթբետոնե ծածկերում անցքերի շաղափում Φ20մմ և ամրացում խողովակների մոնտաժումից հետո	հատ	3	3010	9030
4	էլեկտրատաքացուցիչ «Արիստոն» - 100լ	կ-տ	1	150000	150000
5	Խողովակների ջերմամեկուսացում ռետինե պատյանով (31գծմ)	մ2	3.82	2900	11078
6	Ռետինե մեկուսիչ խողովակի արժեքը ճ63քք	մ	10	540	5400
7	Նույնը, Φ20մմ	մ	21	422	8862
8	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ50մմ	հատ	72	752	54144
9	Նույնը, Φ15մմ	հատ	36	76	2736
10	Պոլիէթիլենային բաքի տեղադրում V=1,0մ3	հատ	1	13000	13000
11	Լողացող-փակող սարքերի Φ15մմ տեղադրում բաքի մեջ	հատ	1	25700	25700
12	Չժանգոտվող պողպատից կրկնատակ b=1մմ թիթեղ	կգ	15.7	1100	17270
13	Շվելլեր բաքի տակ N10 L=1.0մ ,2հատ	կգ	24.6	910	22386
14	Հակադարձ փական Φ15մմ	հատ	8	5069	40552
15	Խառնիչ Φ15մմ	հատ	2	6500	13000
16	Պոմպի տեղադրում KFO; Q=1.8մ3/ժամ, H=11մ, N=0.51կվտ	հատ	1	185000	185000
17	Բրոնզե պարուրակավոր փական Φ50մմ	հատ	1	5400	5400
18	Նույնը, Φ15մմ	հատ	8	3900	31200
19	Ճենապակյա բարձրորակ լվացարանների տեղադրում (600x450)մմ,կանգնակով	կ-տ	2	26000	52000
20	Ճկում խողովակներ Φ50մմ, L=20մ	հատ	2	4831	9662
21	Կտրում, միացում գոյություն ունեցող ջրագծին	տեղ	1	24200	24200
22	Հակահրդեհային արկղ մետաղական 540*650*230մմ	հատ	2	22650	45300
23	Հրշեջ փողակ Φ50մմ	հատ	2	2500	5000
24	Հրշեջ ծռակ փականով Φ50մմ	հատ	2	5940	11880
25	Կրակմարիչ ածխաթթվային	հատ	2	11325	22650
				Ընդամենը՝2	875880
	3.Ներքին կոյուղու ցանց				
1	Պոլիվինիլքլորիդե անճնշում խողովակների Φ110x3,2մմ տեղադրում փորձարկումով	մ	10	1980	19800
2	Պոլիվինիլքլորիդե անճնշում խողովակների Φ50x2,2մմ տեղադրում փորձարկումով	մ	4	1400	5600
3	Պոլիվինիլքլորիդե թեքում Φ100մմ	հատ	1	1800	1800
4	Պոլիվինիլքլորիդե եռաբաշխիչ Φ100x100մմ	հատ	1	2980	2980
5	Պոլիվինիլքլորիդե եռաբաշխիչ Φ50x100մմ	հատ	2	1984	3968
6	Պոլիվինիլքլորիդե անկյունակ Φ50մմ	հատ	2	1280	2560
7	Պոլիվինիլքլորիդե սիֆոն Φ50մմ	հատ	2	2280	4560

8	Պոլիվինիլքլորիդե ստուգիչ Φ100մմ	հատ	2	2700	5400
9	Երկաթբետոնե ծածկերում անցքերի շաղափում Φ100մմ և ամրացում խողովակների մոնտաժումից հետո	հատ	1	3000	3000
10	Ճենապակյա բարձրորակ ղուգարանակոնք լվացման տակառիկով	կ-տ	1	38600	38600
				Ընդամենը՝3	88268

4.Օդափոխություն

1	Սպլիտ սիստեմի հովացման կոնդիցիոներ 5կվտ հզորությամբ , տաքացման 5.8կվտ հզորությամբ	հատ	4	194000	776000
2	Անշարժ ճաղավանդակ 200x100	հատ	1	3300	3300
3	Զոնտ 3K00000 ցինկապատ թիթեղից D=350մմ,b=0.7մմ	հատ	1	5950	5950
4	Օդատար ցինկապատ թիթեղից կլոր կտրվածքի փորձարկմամբ և կարգաբերմամբ b=0,5 Φ200	մ2	5	6450	32250
5	Ցամակքուրդախողովակ	մ	20	2700	54000
6	Անցքերի բացում առաստաղում 2հատ	մ3	0.05	80150	4008
7	Անցքի լցափակում 2հատ	հատ	2	5188	10376
8	Ցամակքուրդախողովակ	մ	20	2700	54000
				Ընդամենը՝4	939884

5.Էլեկտրամոնտաժային աշխատանքներ

1	Էլեկտրալուսավորության վահանակի արկղ 12մոդուլի համար	հատ	1	17640	17640
2	Ելքային ավտոմատ անջատիչով միաֆազ 30Ա	հատ	6	3000	18000
3	Ելքային ավտոմատ անջատիչով միաֆազ 25Ա	հատ	2	3000	6000
4	2 էկոնոմ լամպերով առաստաղային լուսատու 2*11վտ, 2x60վտ հզորությամբ	հատ	19	10640	202160
5	1 էկոնոմ լամպերով պատի լուսատու 2*11վտ , 1x60վտ հզորությամբ	հատ	25	9504	237600
6	5 էկոնոմ լամպերով կախովի լուսատու 2*11վտ, 2x60վտ հզորությամբ	հատ	6	11000	66000
7	Վարդակ երկբևեռ, հողանցման հպակով, թաքնված հաղորդալարի համար 250վ, 16Ա պատերում	հատ	12	1700	20400
8	Վարդակ միաբևեռ, հողանցման հպակով, թաքնված հաղորդալարի համար 250վ, 16Ա պատերում	հատ	18	1400	25200
9	Անջատիչ մեկ տեղով, թաքնված հաղորդալարի համար 220վ, 6Ա	հատ	6	1440	8640
10	Նույնը, երկու տեղով	հատ	10	2100	21000
11	ՊՎ-1x2.5մմ2 կտրվածքով հաղորդալարի մոնտաժում պատերով , ճկախողովակներով Φ25մմ	մ	750	540	405000

12	ՊՊԲ- 2x4.0մմ2 կտրվածքով հաղորդալարի մոնտաժում պատերով , խողովակներով Φ25մմ	մ	250	640	160000
13	ՊԲ- 2x2.5մմ2 կտրվածքով հաղորդալարի մոնտաժում պատերով , խողովակներով Φ25մմ	մ	500	580	290000
14	Φ25մմ PVC ճկախողովակի տեղադրում	մ	750	502	376500
15	Ցածրավոլտ մեկուսիչ	հատ	2	1200	2400
16	Մետաղաճոպանի մեկուսիչ	հատ	4	1100	4400
17	Ցցաձող	հատ	3	752	2256
18	Մետաղաճոպանի տեղադրում Φ6մմ	մ	20	924	18480
19	ԹԹթ -3x16մմ2 կտրվածքով պղնձյա ջիղերով մալուխի մոնտաժում մետաղաճոպանով, ամրակներով	մ	20	4400	88000
20	ԹԹթ -3x16մմ2 կտրվածքով պղնձյա ջիղերով մալուխի մոնտաժում պլաստմասե խողովակներով	մ	10	4400	44000
				Ընդամենը՝5	2013676
				Ընդհանուրը՝1,2,3,4,5	10492668
				ԱԱՀ-20%՝	2098534
				Ընդհանուրը՝	12591202

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ, Վ. Պետրոսյան 4
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ900441001295
ՀՎՀՀ 05004247
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
[illegible] գործերի գծով տեղակալ
_____ Հ.Գևորգյան
/Լիազորություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիկի մարզ ք.Սևան
Գրիբոյեդովի 12 բն 25
Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 205002227051
ՀՎՀՀ 08616945

_____ Վ.Մխիթարյան
/Լիազորություն/

Հավելված թիվ 2
« 04 » Օգոստոս 20 17 թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01-28 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«Կաքավաձորի մշակույթի տան վերանորոգում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**Կաքավաձորի մշակույթի տան վերանորոգում**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	01.11.2017թ
2			
3			
4			
5			
...			
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	01.11.2017թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ, Վ. Պետրոսյան 4
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ900441001295
ՀՎՀՀ 05004247
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի Աշխատակազմի ղեկավար
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիկի մարզ ք.Սևան
Գրիբոյեդովի 12 բն 25
Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 205002227051
ՀՎՀՀ 08616945
Տնօրեն
_____ Վ.Մխիթարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 04 » Օգոստոս 2017 թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01-28 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
28	45611300-20	**«Կաքավաձորի մշակույթի տան վերանորոգում»**								**10848000**	**10848000**	**10848000**	**10848000**	**10848000**	**10848000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ, Վ. Պետրոսյան 4
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ900441001295
ՀՎՀՀ 05004247
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի Աշխատակազմի ղեկավար
_____ Գ.Գարեգյան
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիկի մարզ ք.Սևան
Գրիբոյեդովի 12 բն 25
Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 205002227051
ՀՎՀՀ 08616945
_____ Վ.Մխիթարյան
/ստորագրություն/

Հավելված թիվ 4
« » Օգոստոս 20 17 թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01-28 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը
նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված
աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման
ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » Օգոստոս 20 17 թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01-28 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն